

1903
JAN 15 1893
NEW YORK

1903
JAN 15 1893
NEW YORK

42րդ ՏԱՐԻ — ԹԻԻ 3989

ԳԻՆ 40 ՓԱՐԱՅ

1 ՄԱՅԻՍ 1893

ՄԱՍԻՍ


ՀԱՆԴԵՍ

ԱԶԳԱՅԻՆ, ԳՐԱԿԱՆ, ԳԻՏԱԿԱՆ ԵՒ ՔԱՂԱՔԱԿԱՆ
ԿԵ ՀՐԱՏԱՐԵԿՈՒԻ ՍՍԵՆ ԺԱՐԱԹ ՕՐ

ՏՆՕՐԷՆ - ԽՄԲԱԳՐԱԴԵՏ
ԳՐԻԴՈՐ ԶՕՀՐԱՊ

ՏԱՐԵԿԱՆ ԲԱԺԱՆՈՐԴԱԳԻՆ
Պոլիս եւ Գաւառներ 40 Ղրուշ
Ռուսաստան 4 Բուլղի
Եւրոպա 10 Ֆրանք

ՀԱՍՑԷ
Ղալաթիա, Իզմիրի Օղլու խան, քիւ 3-4



Ս. Լ. ՖՕՂՆՍՈՑԻ

Պ Ա Տ Ր ՈՒ Ա Կ Ը

Ս. Կարապետի թաղ. Խորհուրդը կը յայտարարէ որ տուն մը վարձելով հոն պիտի ժողվէ թաղին հարիւրաւոր տղաքները, որ փողոցներուն մէջ կը թափառին յորմէ հետէ ճեմարանը չի կայ:

Ճեմարանը նոր պրած է: Ոչ: Անկէ ի վեր եօթը տարիէն պակաս չէ: Եթէ իրաւ ճեմարանի պրեկէն ի վեր ատ պէտքը կար ու անտեսած է, մեծ պատիւ չէ Ս. Կարապետի թաղ. Խորհրդարանին: Արտաքինն աս է:

Քիչ մը ներսի կողմը: Ճեմարանի փոշիացումէն ետքը, Ս. Կարապետ, համաձայնութեամբ մը, թաղին տղաքները կը զրկէ Ս. Խաչ, իր կողմէն ալ ներկայացուցիչ մը ունենալով Հոգաբարձութեան մէջ: Եւ անկէ ի վեր երկու թաղի տղաքները եղբօր պէս կը նստին մէկ վարժարանի գրասեղաններուն վրայ:

Բայց որովհետեւ թաղային անձուկ ինքնասիրութիւններ կան, վճարմանց թուղթերուն վրայ միշտ գծաութեան պատճառներ կը փնտռուին: Օրինակի համար, եթէ աս ինչ տղան հիւանդութեան համար տասնհինգ օր քացակայ եղած է, պէտք է վճարումն ալ ըստ այնմ զեղչել: Հոգաբարձութիւնը չընդունիր. Թաղականը կը պնդէ, պաշտօնաթուղթը կ'երթայ կուգայ, և այսպէս օրէ օր պզտիկ ճեղքուածը խրամատ կը դառնայ, ու Ս. Կարապետի Խորհուրդը իբրեւ թէ ալ յաջողած իր ծրագրին մէջ, յայտարարութիւն կ'ընէ հիմա բարեկիր սրտով թէ ինք դպրոց չունենալուն հարիւրաւոր տղայք թափառական կը պտտին:

Անկեղծ չէ աս յայտարարութիւնը.

նր. նախ որ Ս. Խաչի դուռները բաց են երեք վայրկեանի հեռաւորութեանը մէջ. և թէ նոյն իսկ երկու մասնաւոր հայ վարժոյցներ կան այսօր Ս. Կարապետի թաղին մէջ: Նոր վարժարանի մը բացումը կը նշանակէ պարզապէս ջանալ որ բնաւ թաղին տղայքը օրինաւոր վարժարան չունենան, և թէ անդին ալ Ս. Խաչը, որ 5-600 դահեկանի նպաստով կ'ընայ աւելի օգտակար ըլլալ, զրկել անկէ ու ամսական հաշուեկշիւին մէջ խրամատ մը բանալ:

Արդ, երբ կարգ մը մասնաւոր ու թաղ. ազգային վարժարաններու մէջ կ'ուզուի նոր մը բանալ, ճեմարանի փոշիացումը եօթը տարիէն ետքը իբրեւ նոր բան կը հրատարակուի հոգածու սրտով՝ ինքնասիրութիւն մը պատուակելու, և երբ հնարք կը գտնուի որ աղքատիկ ուսանողներ օրինաւոր դպրոց չունենան, ինչպէս եղած է Ս. Խաչ վարժարան 5-6 տարիէ ի վեր երկու թաղերուն համերաշխ կարգադրութեամբ, պարզապէս միջոց մըն է աս աղքատիկ ուսանողներու դաստիարակութիւնը դէմ, և մեզի կը յիշեցնէ թաղային խորհրդարաններու հին բարբի շարունակութիւնը:

Թաղային աս ինքնասիրութիւնը անտանելի բան է: Տակաւին չենք մոռցած որ, վերջին ընտրութեանց ժամանակ, երկու թաղերու ընտրական ժողովները նիստ ընելու համար, օրերով տեղի խնդիր յուզեցին. Ս. Խաչ մեծ է թէ Ս. Կարապետ: Եւ աս ծիծաղելի պատկերին առջեւ հասարակութիւնն ալ ապշեցաւ: Չաղկելու է աս ինքնասիրութիւնը և թոյլ տալու չէ որ կեղծաւոր հոգածութիւն մը պատրուակ ընէ իր միջոցները ի գործ դնելու:

Արդ, Ս. Կարապետի խորհրդարանը մէկ բան կ'ընայ ընել: Եթէ իր միջոցները կը ներեն, փոխանակ պատրուակներով միացեալ դպրոցին հոգա-

բարձութեան հետ անտեղի առարկութիւններ ընելու, տան մը վարձքն ալ աւելցնելով իր գումարին վրայ, ամսական որոշ նպաստ մը տալ և նոր ծախքեր չբանալ եկեղեցւոյ սնտուկին, որու ամէն թաղական աղայ պարտաւոր է նայիլ իր դրամարկդին պէս:

ՀՐԱՆԴ

ՄԵՐ ՊԱՏԿԵՐԸ

Ա. Ա. ՅՕՆՍՏ 808 է.

«Բանի մը վրայ մի՛ երգնուք երբեք» խրատը պատուական է: Եթէ հաւահմայ մը ելլէր պնդելու ինծի թէ, օր մը Սիւսիցիներու բարբերէն նորավէպ մը գրելու արտաւոյց գաղափարը պիտի ունենայի, և կամ Իսլանտայի ապառաժներուն բոլոր տիրութիւնը պիտի յաւակնէի դնել նկարագրական հատուածի մը մէջ՝ պիտի ծածաղէի, ստոյգ է, բայց պիտի ծիծաղէի ու պիտի զուարճանայի միայն. իսկ եթէ ըսէր թէ օտար հեղինակի մը վրայ ոչ թէ գրական նկար մը՝ այլ նոյն իսկ ուրուանկար մը պիտի ուզէի փորձել՝ պիտի պըռքսալէի յօնքերս ու պիտի նեղանայի պարզապէս:

Օտար մատենագիրներու վրայ հայ գրիչներու կողմէ եղած ուսումնասիրութեանց գաղափարին բոլոր ուժովս հակակարծիք եղած եմ ու միշտ հակակարծիք պիտի ըլլամ: Ինծի համար, ժամանակի կորուստ մըն է ան, զուտ ու ցաւալի կորուստ մը. ձրի վատնում մը տաղանդի, եթէ երբեք տաղանդ կայ իրօք: Սա անխախտ համոզումն ունիմ որ, Փրանսացի հեղինակ մը՝ զոր օրինակ՝ Լըմէթուի կամ Պալանդիէտի շա՛ր՝ աղէկ չը կրնալ վերլուծելու, չը կրնալ դատելու պզտիկ համեմատութիւնը կրնանք ունենալ առանց մեր գրական դիւրադգածութեան համար վիրաւորանք մը զգալու: Եւ, նոյն իսկ նորերուն գրական վարկին ճշմարիտ նախնաձախնդրութեամբ մը, չեմ ուզեր որ քառորդ դար մը վերջը, արթուն, ուշիմ,

և իր ըրած գրականութեանն աւելի զիտակից սերունդ մը, մեր արդէն աւելորած մօրութիւն խնդայ, չարածձի ու արհամարհոտ ժպիտով մը մենէ մէկուն՝ օրինակի համար, Սիւլլի Բալետտի վրայ մէկ կցկտուր, մուրացածոյ ուսումնասիրութիւնը ցոյց տալով, երբ անդին, դեռ Պէշիկթաշեանէն կենսագրական ծանօթութիւն մ'իսկ ձգած չըլլանք, և Գուրեանէն ալ... պիտի ըսէի, եթէ չը յիշէի թէ Դըլ մը կայ որ ուսումնասիրութիւն մը խոստացուած է անոր վրայ:

Այս մտածումները կ'ընէի իւրովի, երբ Միւսի խմբագրապետը առաջարկեց ինծի Բաժնի Գրէլ Տօսէին վրայ: Խնդիրը Փրանսական գրականութեան վարպետներէն մէկուն վրայ է, ու թերեւս կարծէք թէ ատոր համար ալ շատ հեշտ ըլլայ գործս. գիտէք սա սովորական, ժողովրդային մտածումը. «Ի՛նչ չը գրուի վրան...»: Բայց ես անոր համար մանաւանդ հեշտ չեմ նկատեր զայն... զի ճշմարիտ վարպետ մըն է որով պիտի զբաղէրք հոս. բաներ կան որոնց մարդ չը կրնար մօտենալ առանց ինքնամոլութեան ու առանց երկիւղած զգացումի մը: Աւասիկ ուրեմն, ըստ ձեզ, ընելիք գեղեցիկ ուսումնասիրութիւն մը: Բայց եթէ կ'ապասէք որ դասական սովորութեան համաձայն, գրադարանիս բոլոր քննադատական գործերը վար թափթըփեմ, որպէս զի չափուած կշռուած, ու հմտութեամբ լեցուն—և անով մեղապարտ—յօդուած մը ներկայացնեմ ձեզի, փարատեցէք պատրանքնիդ: Այդ համբերութիւնը առաքինութիւն մըն է զոր չունիմ. դասաւորութեան ճաշակը իմս չէ եղած բնաւ. տղայ հասակէս թղթադրոշմի շատ գէշ հաւաքիչ մըն էի: Թող հանգիստ մընան ուրեմն այդ գիտուն գիտուն հատորներս գրադարանիս մէկ խորշը, իրենց փոշիէ ծածկոյթին տակ. անոնց հանդիստը թերեւս իմս ալ է: Այն գրագետին վրայ գոնէ որ ամենէն անձնականն է գրագետներուն՝ հարկ է որ անձնական բան մը գրուի, և հայ գրողի մը համար թերեւս այդ միայն է ներելին:

* * *

Եթէ մանաւանդ այս օրերս տեսակ մը գրական եղեռն համարուած չըլլար առաջին զէմքի գործածութիւնը մեր գրականութեան մէջ՝ (բայց դացէք ուրեմն քերականութիւնները սրբագրելու նախ) շատ անակնկալ բան մը պիտի ըսէի. պիտի ըսէի թէ, ա՛լ հիմայ քիչ մը պակաս կը սիրեմ Տօտէն: Բայց իրա՛ւ, երբ արդէն ըսած եմ ձեզ թէ, ատեն մը իմ սեւեռեալ մտածումս, իմ մօլութիւնս էր ան. իմ խտէա՛լ էր, —եթէ այս ծեր բառը գոյութիւն ունի դեռ,—և իմ գրական կուռքս էր ան: Յայնը քեզի ունի իր սենեկին մէջ, ես իմ խցիկիս մէջ իր պատկերն ունէի, որուն առջեւ եթէ կանթիզ չէի վառեր, գոնէ կը վառէր լոյսը գրասեղանիս վրայ զոր գրած էի այդ պատկերին տակ: Ծխախոտի մոխրի պնակ մը ձեռք անցուցած էի, —ի՛նչ թանկագին ստացուածք ինծի համար,—որուն վրայ իր արուեստագէտի գեղեցիկ գլուխը կար նկարուած: Իրա՛ւ է որ իմ հիացումս այս վարպետին համար երբեք այնքան առաջ տարած չեմ՝ որ յափշտակութեան վայրկեանի մը մէջ իր այդ պատկերներուն հետ դիմառնաբար խօսիմ. բայց իրմէ ըրած չըքնաղ ընթերցումներուս անմիջական ազդեցութեանը տակ, և այդ պատկերներուն խոր հայեցողութեանը մէջ ընկղմած՝ կը խոստովանիմ որ չա՛տ անգամ սքանչացման հանգիսական նամակներ ուրուագրած եմ իրեն ուղղելու, որոնց միամտութեան վրայ այնքան պիտի խնդայի յետոյ: Ու ըսեմ դարձեալ, Տօտէին համար քանի մը պզտիկ մեղքեր ալ գործած եմ. շատ հիւր դռնէն ձամբել տուած եմ իբր թէ տունէն բացակայ ըլլալի, մինչ վերը, նոյն պահուն, սենեկիս մէջ ինքզինքս հաճոյքով բանտարկած էի այն զրկեալ լլկեալ արարածներուն հետ, որոնք ժաբ (կամ ձէք, եթէ կը նմանորէք) ու Տէգիռէ կը կոչուին. օ՛հ, խանդավառութեան անուշ անուշ ժամերը...

Բայց հիմայ, երբ արդէն կ'զգամ թէ անպայման հիացումներու, և անզուսպ խանդավառութեանց տարիքս տակաւ կ'անցնի կ'երթայ,—և անոր համար կ'ըզգամ այդպէս, զի հիացումներս ու խանդա-

վառութիւններս նուազ ուժգին են հիմայ,—հիմայ, այս, հա՞րկ է որ խոստովանիմ, պակաս կը սիրեմ Տօտէն:

Միակողմանի ու նեղմիտ գաղափարներ սկսայ ունենալ գրականութեան վրայ որ՝ ինք՝ այնքան բաղմակողմանի է և այնքան ներող: Անկեղծութիւնս չքմեղանքս ըլլայ թերեւ: Հիմայ, լրջագէմ և ծանրախոհ իմաստասիրութիւնս է զոր կը փընտրեմ գրականութեան մէջ ամեն յատկութենէ առաջ, ամեն յատկութենէ վեր: Անհանդարտ ու փրփրուն այն գրականութիւնը որ մեծ մեծ ու անօգուտ չարժումներ կ'ընէ զէպի երկինք, որ ինքզինքէն ելած մարդու մը նման կը պատրուուի ու ծեծիկ ծեծիկ կուգայ՝ ինծի համար չարժեք բնաւ այն միւս գրականութիւնը, որուն մէջ իմաստասիրութիւնը իր խորունկ չունչը փշած է: Այդ իմաստասիրութիւնը, եթէ կ'ուզէք, մեղամաղձոտ չեղտ մը ունի մերթ, բայց երբեք վատսիրտ մարդու հեկեկանքը. ազնուական ժպիտը ունի յաճախ, բայց գռեհիկ խոշոր խնդուքը, բնա՛ւ:

Բացատրութեանց հասարակ տեղիքին համար ունեցած ատելութենէս ետքը, նիւթերուն հասարակ տեղիքին համար ալ սկսայ սոսկում մը ունենալ, գրական ի՛նչ նրբահիւս բեհեղով ալ որ քօղարկուած ըլլայ այն: Այսօր երեսս չեմ կրնար չը թթուեցնել երբ որոշեալ եղանակի մը վրայ վա՛րձմէ մը կը լսեմ, և կամ կ'ըզգամ որ գրագէտը նիւթը պատրուակ մըն է ըրած, ոտակ իր բառարանին ճոխութիւնը արժէցնելու, առանց զգածուելու իմաստասիրական ո՛ր և է գաղափարէ մը: Եւ սակայն այդ գաղափարն է ճշդիւ զոր գրագէտը պարտէր հալածել մտածումներու մշտչին մէջէն, և իր սուր գրչով թղթի կտորին վրայ փակցընել, ինչպէս չարաճճի տղեկ մը օգին մէջէն միջատ մը կ'որսայ, և գնդասեղի մը ծայրովը զայն իր հաւաքածոյին մէկ էջին վրայ կը կայցնէ:

Է՛հ, կ'ուզէ՞ք որ աւելի ազէկ բացատրեմ իմ նախասիրութիւններս գրական սեռերու մէջ.—սովորական գաղափարներու պայծառ ցորեկին մէջ չեմ սիրեր բնաւ

իր հրախաղութիւնները՝ որքան ալ հրաշա-
զան ըլլան անոնք, իր մէկ խուսափուկ
նշոյլը կը փնտռեմ միայն որ լուսաւորէ
գոնէ մէկ կողմը մարդկային տարորոշ բաղ-
ձանքներուն ու մռայլ անգիտակից խոր-
հուրդներուն :

Մտքի այս ձգտումով ուրեմն, ալ
չատ չեմ սիրեր այն զրբերը որոնք կը
խնդան : Ու անոնք ալ որոնք լալկան բան
մը ունին՝ չեմ սիրեր դարձեալ : Այն գըր-
քերը սկսայ սիրել, որոնք փոխանակ ճշել
պոռչտալու, ցած ձայնով կը խորհրդածեն,
որոնք աշխարհային կեանքի ըմբռնումը
կը յեղաշրջեն, և կամ անոր մէկ նոր ըմ-
բռնումը կուտան քեզի, որոնք մեր միտ-
քը կը ծոյգ հոգեբանական հանելուկ մը կը
յաջողին մեկնել, և կամ իմաստասիրա-
կան խնդրի մը առջեւ հարցական հսկայ
նշան մը կը ցցուեցնեն, եթէ երբեք ար-
դէն ցցուածը չը փրցնեն, չը քանդեն :

Օ՛հ, մի ըսէք ինծի թէ սահմանափակ
բան է մէկ սեռ միայն պահանջել զրա-
կանութեան մէջ, թէ որքան ատեն այս
ինչ զրադէտը բանաստեղծական զգացու-
մով մը ծնի, և սա միւսն իմաստասիրա-
կանին իմացումովն օժտուած ըլլայ ա-
ռաւելապէս՝ նոյնքան ատեն գոյութիւն
պիտի ունենան, բանաստեղծական, իմաս-
տասիրական և այլ սեռեր զրականու-
թեան մէջ, և թէ սոսկ խառնուածքի խըն-
դիր մըն է այս : Կը պատասխանեմ ձեզի.
—Այո, թերեւս այո, բայց իմաստասի-
րականը տուէք ինծի :

Եւ հիմայ որ գրական խնդրոց մէջ իմ
միամտութեանցս այս յայտնութիւնն ըրի,
չատ պիտի մեղադրէի՞ք զիս անոր համար
որ քիչ մը պակաս կը սիրեմ Տօտէն, վի-
պասանութեան յափշտակիչ այդ մեծ վար-
պետը, որ այնքան քիչ իմաստասէր է սա-
կայն, այնքան սակաւարիւն իմաստա-
սէր մը :

Բայց, իմ մտաւոր խզումս, քանի որ
խզման պէս բան մը կայ, ցաւազին բան
մը ունի ինծի համար : Տարիներով սեր-
տիւ փարած մէկ բարեկամդ է, որուն
վրայ առաւօտ մը կուգան քեզի ամենէն
գէշ բանը պատմել : Մեծ է ծանրացող
ամբաստանութիւնը. կ'զգաս, կ'ըմբռնես

թէ պէտք է խղել, թէ վարանիլ ներելի չէ.
բայց... ի զուր : Ամաղջ անցեալ մըն է
զոր մէկէն պիտի ջնջես աւրես : Պիտի
կրնայի՞ր դիւրութեամբ պատուել աղւոր
գրով գրած մէկ էջդ եթէ պատահմամբ
գրչէդ մեղանի կաթիլ մը իյնալով արատ
մը դնէր անոր վրայ... : Այս պարագային
մէջն եմ ես ալ, և հիմայ այդ անցեալը
պրպտենք քիչ մը :

* * *

Տարւ տարի կայ, եթէ աղէկ յիշողու-
թիւն ունիմ, գրպանս ձեռագրով մը ու-
ռած, զոր այն տաւն չը պիտի ուղէի վիտ-
խանակել թղթազրամի ուռոյցքի մը հետ՝
կը ներկայանայի Արեւելի իմադրատու-
նը, վարանտո, խպնկոտ աղճկան մը պէս
զոր աղջիկտեսի կը հանեն : Կ'ըմբռնէք թէ
իմադրատան էջֆէշան դիրքը բարձրու-
թեան ինչ տպաւորութիւն մը ներգործած
ըլլար վրաս : Թոյլթօյի մէկ նորամուկին
թարգմանութիւնն էի ըրած, Մեղա՞մեջ,
աւելի ունս մեծանուն վիպասանէն բան
մը թարգմանած ըլլալու փառասիրու-
թեամբ՝ քան ճամբորտապէս գեղեցիկ հատ-
ուած մը, զի կը խոստովանիմ որ, թարգ-
մանածիս ներքին արժէքը քանի մը տարի
ետքը միայն կըցայ ըմբռնել : Արեւելի
այն ատենուան քրօնիկագիրներէն մին
հարցուց նորեկին իր անվտանգ, անորոշ
ակնարկովը .

—Ի՞նչ ընթերցումներ կ'ընէք ընդհան-
րապէս :

Ու նորեկը միշտ վեհերոտ .

—Էօժէն Սիւ... :

Չարտճճի ժպիտ մը քրօնիկագրին չըրթ-
ներուն վրայ, որ շառագունում մը կու-
տայ միամիտ թարգմանչին այտերուն :

—Գիտեմ, արդէն Լոյսին մէջ ալ ձեր
ըրած մէկ թարգմանութիւնը տեսայ էօ-
ժէն Սիւէ. հին վիպասան մըն է Էօժէն
Սիւ : Եւ յետոյ, պզտիկ ըռութենէ մը վերջ.
—Տօտէ՛ կարդացէք, Տօտէ՛ :

Ինծի բոլորովին անծանօթ անուն մը,
այդ անունը. մտադրեցի կարդալ այդ հե-
ղինակին բոլոր գործերը. յանձնարարողը
ապահովապէս իմադրատան ցրուիչը չէր :
Բայց, չա՛ր սատանայ, քանի մը օր վերջը

այդ անունը չողիացած էր մտքէս, և ես ա՛լ հիմա կը խալնէի զայն վերստին երթալ հարցնել իրեն. կ'զգայի թէ շատ մեծ մատենագիր մը ըլլալու էր ան, չա՛տ մեծ, և զայն չը գիտնալ ամօթ էր ինծի: Ե՛հ, դուք ըսէք մանկական մտածում, ես ձեզի կ'ըսեմ շատ բնական, շատ մարդկային:

Տարօրինակ գուգադիպութիւն մը ուղեց սակայն որ քանի մը օր ետքը եղբայրս ճամբորդութենէ մը վերադառնայ, իր հետ բերելով ամբողջ ծրար մը վէպերու, որոնք ճամբորդութեան մը մէջ, ի չգոյէ խօսակից սիրուն ուղեւոր կնոջ մը՝ միշտ ամենէն անորոշելի ընկերները պիտի մընան: Բնագրմամբ՝ այդ գրքերու ծրարին վրայ խոյացայ, ու մինչդեռ կը փորձէի բանալ զայն, եղբայրս սենեկին մէկ անկիւնէն, իրեններէն պաշարուած, ժամանակ կը գտնէր պոռալու ինծի. «Տիգրան, ադ գիրքերը կարգա՛ւ. սքանչելի բաներ են»: Բացի ծրարը, աղւոր հոտող վէպեր, պոսակեալ նոյն իսկ ֆրանսական կաճառէն (այո, Քէչեան էֆէնտի, վէպերն ալ կրնան պոսակուիլ Ակադեմիայէն) ու կարգացի, SOSէ: Քրօնիկագրին յանձնարարած հեղինակն էր, իսկ և իսկ, ներելի չէր կասկածիլ. ու այդ ճամբորդութենէն վերադարձին՝ ա՛լ ուրիշ նուէր չը փրփուռեցի եղբորմէս:

Ատեն մը ետքը Ալֆօնս Տօտէի (հիմա ա՛լ աղէկ գիտէի իր անունը) բոլոր գործերուն շարքը ամբողջացուցած էի: Եւ կին մը որ չողակնազարդ ապարանջան մը ունի՝ երբեք աւելի հաճոյք չը պիտի զգայ իր այդ ապարանջանին չողակները հատիկ հատիկ համրելով՝ որքան ես կ'զգայի իրաբուրով շարուած տեսնելով մատենագրարանիս մէկ աչքը, այն հրաշակերտները որք կը կոչուին Ֆուֆօն Ժէօն և Ռիպէ Բէնէ, Ճէք, Նապապ, Սաֆօ, Նումա Ռումէսթան, Էնվանժէլիսթ, Էրմօնթէլ, Լէ ֆամ տ'առօթիսթ, Թառթառէն սիւռ Էն Դ'Ալբ, Թառթառէն տը Թառաքօն, Բօռ Թառաքօն, Էրմօնտառ տը մէ Լիփլը, Թառնիթ ան տը Բառի, Ռօպէլ Էլմօն, Ռօզ Է Նիւնէթ, Էրմօնթիլէն, Էրմօնթալ, Սուվընիտ տ'էօն Օմ տը Լիլո, նոյնքան չողակներ, նոյնքան զոհարներ. . . :

* * *

Ներեցէք ինծի, դոնէ անգամի մը համար, առաջին դէմքի մէկ շարաշար գործածութիւնն ընել և ըսել ձեզ թէ, շատ ծոյլ, և հետեւապէս շատ քէշ ընթերցող մըն եմ: Ընթերցումը բռնադատեալ ունկնդրութիւն մը, գաղափարի տեսակ մը գերութիւն է ինծի համար: Չորս հարիւր երեսնոց գրքերը միշտ իմ յուսահատութիւնս եղած են, ու շատ գրքեր խղճի գոհունակութեան համար կարդացած եմ միայն: Փառնիկ էֆ. Ֆնտըլեանին ընթերցասիրական առաքինութիւնը իմա չէ եղած երբեք:

Ընթերցանութեան այս պակասին բերմունքովն էր որ ուրիշ շատ հեղինակներ ճանչցած չըլլալով, ու մէկէն Տօտէի գործերուն ծանօթանալով՝ հրապուրուեցայ, հմայուեցայ իրմէ, ճիշդ ինչպէս անփորձ պատանի մը որ իր առջի հանդիպած աղջկան կը սիրահարի, իր սրտին խանդաղատանքի բոլոր պաշարն անոր յատկացնելով: Տօտէն ինծի համար այն վիպասանը չէր, որ, ինչպէս ծիծառ բացատրութեամբ մը կ'ըսուի, շարժած էր սրտիս թելերը. ա՛հ, շարժած էր եթէ կ'ուզէք, բայց Վիլհելմ մը իշխողութեամբ որ քնարի մը թելերը կը շարչրկէ՝ ու անծանօթ նոր խաղեր կը խլէ անոնցմէ:

Տօտէն իմ գգայութեանցս մեծ սրիչն եղաւ այսպէս, ու տակաւ ինծի համար անբաժան ընկեր մը, բայց խորհրդակից մըն էր մանաւանդ որուն ես բան մը չէի ըսեր, ու ինք ամեն բան կ'ըսէր ինծի:

Միակ յաւակնութիւն մը ունիմ, սա թէ, շատ հազուադէպ գրամոյններ կան թերեւս միայն, որոնք ինծի չափ մօտէն հետեւած ըլլան իր վրայ երեւցած ամեն ուսումնասիրութեանց. քննադատութիւններէն՝ հեղինակին չափ, և միամտութեանս մէջ գուցէ աւելի իսկ զայրացած եմ, ու ներբողներէն ա՛յնպէս հըրճուած իբր թէ ես իսկ ըլլայի անոնց առարկան: Եւ եթէ այսօր իր գործոց վրայ բազմակողմանի ուսումնասիրութեան մը գաղափարն անկեղծապէս կը խրաչեցնէ զիս՝ պատճառն ա՛յն է, զի՝ ճշմարիտ յանդգնութեան մը պէտքը կը զգամ՝ հաւա-

տալու համար թէ, այնքան տիպար-ու-սումնասիրութիւններ, զորս տեսած եմ, պիտի կրնամ իմ հաւոյնս մէջ լուծել, և իբր նոր ուսումնասիրութիւն մը, նո՛ր մե-տադ մը ներկայել ձեզի՝ ասոր համար հարկ էր թերեւս որ Նոսթրէմի մը գրա-կան կրթութիւնն ունենայինք մենք, մենք որ կը գրենք իբր գրական բոլոր պաշար ունենալով զգայութիւն մը միայն, ար-ուեստագէտի զգայութեան մօտեցող բան մը, զոր արդէն մերիններէ չատերուն կարի գրական միտքերը ամեն օր կը ջնան բը-ղիկ բղիկ ընել :

Բայց կը տեսնեմ որ կը չեղիմ՝ ըսեմ ուրիմն ձեզի անմիջապէս թէ, ձեռին ու Թոմաս Ժէմին ընթերցումովն էր որ փոր-ձուեցայ զրեւ արուեստով՝ այնքան թոյլ, միամիտ, բայց այնքան ինքնաբոլիս վէպս, իրապաշտ տարազի մը վրայ :

Ա՛հ, կախարդիչ թովիչ վիպասանք՝ ի՛նչ գերասուր ու անողորմ գննութիւն, ու ինչ նրբանուրբ ու խորիմաստ դիտո-ղութիւններ որոնք կը յորդին, կը պոռթ-կան իր վէպերու էջերէն : Ի՛նչ խանդա-կաթ գորով, կարեկցութիւն, ու ի՛նչ հա-ղորդական յուզում մը զրկեալ ու անժա-ռանգ արարածներուն համար : Հիմայ ա՛լ մի ըսէք ինծի թէ իր արցունքը կանաչի բան մը ունի. արուեստագէտին արցուն-քնն է ան, որ կը փոխանցի քեզի, և ա՛լ երանութիւն մըն է, անճառ հեշտութիւն մը, զոր կը զգաս այդ արցունքը լալով ի-րեն հետ : Ու ճիշդ այդ խանդաղատանքին քով, ի՛նչ անսպասելի ու խոր սկեպտոսութիւն մը, զոր Բարիզի «Երեսուն տարիները» սով-րեցուցած են իրեն, արուեստագէտին, ի՛նչ կծու հեգնութիւն մը, ի՛նչ նուրբ երգի-ծանք, չարաճճի ու նոյն իսկ չար, և ի՛նչ կ'ուղէք, բայց երբեք կոչո, երբեք գուհիկ :

Իբրեւ վիպո՞ղ. բայց վիպող ինչպէս ինքն է՝ հազիւ ուրիշ մը կը ճանչնամ բովանդակ ֆրանսական գրականութեան մէջ : Զեմ՝ գիտե՛ր հեղինակ մը որ այնքան հրաշալիք, այնքան մոլորութիւն գիտցած ըլլայ դնել ըսելու եղանակին, պատմելու արուեստին մէջ : Իր վիպումը, իրականին մոլեռանդու-թենէն բռնուած, աննշան իրողութիւն-ներու մէկ տափակ թուումը չէ բնաւ :

Գէպքի մը մէջ նշանակալից պարագայ մըն է, գէմքի մը վրայ յատկանշական շեշտ մը զոր մէկէն կը տեսնէ, կ'որոտայ, ու ա՛լ կ'օրօրէ, կը տրորէ զայն, անով կը խաղայ, անով կը զբօսնու, զքեզ ալ միա-սին զբօսեցնելով :

Իր ոճին մէջ ջերմութիւն, ձկնու-թիւն, ու ինքնութիւն մանաւանդ. չար-չարուած, լկուած ոճ մը, որպէս զի կարելի եղածին չափ բազմազան զգացողութիւն-ներ հաղորդէ : անգաղտնապահ ոճ մը, որ իր տէրը կը մատնէ միշտ : Անսովոր կեր-պով կտրտուած նախադասութիւններ, հրապուրիչ նկարներ միակ բառի մը մէջ, որ յաճախ իր դարբնածն է, անակնկալ նմանութիւններ, փոխաբերութիւններ, բաղդատութիւններ, սրտն ի՛նչ և է, իրենք : Բայց ձեռքի ի՛նչ փափկութիւն, և ի՛նչ շնորհ իր նկարագրութիւններուն մէջ : Իր պատկերներն ապահովապէս ձիթաներկէ չեն որպէս զի իւզին թանձրութիւնը զգաս անոնց վրայ : ջրաներկի մը նրբին ու չո-գետեսիլ երանգներն ունին անոնք, ու խուսափուկ մարմնող չըջագիծները : Եւ իր մոգական վրձինը ի՛նչ ճարտարութեամբ գիտէ եթերային յատակ մը նկարել կեան-քի ամենէն կոչո, ամենէն ստորնաքարչ պատկերներուն որպէս զի մեղմէ, ամուքէ անոնց տեսիլը :

Իբր վիպասան, աներեւակայելի դիւ-րութեամբ մը կեանքի ամենէն սովորա-կան գէպքերէն հրաշարուեստ պատ-մութիւն մը կը հիւսէ, ու ընդհակառակն ամենէն անսովոր տիպարները սովորա-կան ու գերազանցապէս կենդանի տի-պարներ դարձնելու տարօրինակ գաղտ-նիքն ունի : Եւ իր այս հրաշազան կարո-ղութեանց հետ, իրականին ի՛նչ խոր ու ապշեցուցիչ ըմբռնում մը, որ զինքը ճըշ-մարտապէս իրապաշտ վիպասանը կը դար-ձնէ, նոյն իսկ Զօլայէն աւելի իրապաշտ, առանց սակայն կէս տասնեակ հատոր դրած ըլլալու իրապաշտութեան վրայ, և ոչ ալ Լա Թեւին առաջին երեսը . . . :

Այս ամենը կը մտածեմ դեռ այսօր, բայց այս ամենը կը մտածէի ու մանաւանդ կ'զգայի ատեն մը : ամբողջ խօսքեր գոց գիտէի իրմէ, իր բոլոր նախադասութեանց

յօրինուածքն ունէի մտքիս մէջ, ու իր ոճին այնպէս վարժուած էի, որպէս թերեւս ո'չ ամեն օրուան գործածած ծխախոտիս հետ: Իմ իրեն նկատմամբ ունեցած հիացմանս մէջ նորահաւատի մը մոլեռանդութիւնը կար պարզապէս իրմէ անդին, իրմէ դուրս ֆրանսական գրականութիւն չկար ինծի համար: գրական ամեն խնդիրներու մէջ իր անունովը պիտի երգնուի միայն: Անոնք որ ինձմէ գիրք մը կ'ուզէին իբր ժամանց՝ հակառակ Տօտէէն ունեցած հատորներս չը վրագատելու ներքին բռնութեանքիս՝ չէի կրնար անոնցմէ հատ մը փոխ տալու: փորձութեան զիմադրել մարդ յաճախ ա'յնքան հաճոյք կ'զգայ ուրիշները մասնակից ընելով իր վայելքներուն: Եւ շատ անգամ, այն բարեկամներուս իսկ, որոնք զուարթ վէպ մը ուզած են ինձմէ՝ ձեռք, յորգաբուխ արցունքի այդ հատորը տուած եմ, ասով նմանելով կարգ մը մենամոլ բժիշկներու որոնք իրենց դարմանած ամեն հիւանդին անփութիս անունը մը կը պատուիրեն, զի . . . իրենց սիրածն է:

Մտքի ու սրտի այս հաղորդակցութեան մէջ ապրած եմ ուրեմն այս վարպետին հետ, մինչև որ օր մը կասկածը պրական զիս՝ չեմ գիտեր ի'նչպէս մղուեցայ մտածելու թէ զրոյսկանութեան վախճանին խորապէս գիտակից զրագէտը, տըպաւորակսն մը ըլլալէ առաջ, խորհող մը պէտք է ըլլայ, ու ջղային մը ըլլ լէ առաջ՝ մտախն մը: Ձէ՛, իր զուգին գիտկին վարող մօր մը վաղանց հեծկլտանքէն յուզուիլ՝ կանացի բան մը պիտի ըլլայ միայն, ցորչափ, անդին անժառանգներու մշտակայ լէզէն մը պիտի գտնուի:

Գրականութեան այս ըմբռնումով ուրեմն, Ժեմայիտի հանքադործներուն պիշերային համախմբման տեսարանը՝ լուսնին ազատ շողերուն տակ՝ ապահովապէս շատ աւելի թեւադրիչ բան մը ունի քան նոյն իսկ ձեռքին հոգեւարքը, ու մահն այդ հէգ տարաբաղդ տղուն, մուցուած, լքուած գէշ մօրմէ մը՝ հիւանդանոցի մը չոր խըշտեկին վրայ: Անհատն ուրեմն անտարբեր է ինծի, երբ մարդկութիւնը կայ, ու ընտանեկան տեսարաններն որքան ալ

կսկծալի ըլլան՝ յարաբերապէս պաղ պիտի թողուն զիս, ցորչափ մեծ ընտանիքին, ընկերութեան խաւերը պիտի մընան դեռ մանրախուզիւ քննելու: Ստոյգ է սակայն որ, այդ քննութիւնը չը կրնար կատարուիլ երբեք ի ձեռն գիւրայոյզ զրագէտի մը, որ մանաւանդ իր վրդովման վայրկեաններուն մէջ իր մտքի պայծառութիւնը պիտի կորսնցնէ՝ այլ իմաստասէր-զրագէտի մը միջոցաւ, որ իրերն այնքան ճշգրտեանէ՝ որքան զանոնք փշթիլ նկարագրէ:

Նապապի հեղինակը, որ թերեւս ամենէն ինքնատիպն է վիպասաններուն, ամենէն օրատես գիտողը, ու ամենէն խորապէս իրապաշտը, միջակ իմաստասէր մըն է միայն: Եւ ի փոխարէն կարգ մը հրաշալի յատկութեանց, որոնք միշտ իր անժխտելի առաւելութիւնները պիտի մնան՝ տժգոյն իմաստասէր մը պիտի երեւայ, ժամանակակից այն միւս վարպետներուն քով որոնք կը կոչուին Զօլա, Կօնքուռներ, ու նոյն իսկ Մօբսան:

Սակայն որքան ալ հարեանցի գտնէք արտասահման իմաստասիրութիւնը, անհրաժեշտ ճարտան իմաստասիրութեան վրայ չը պիտի յագենաք հիանալէ. իր մեծ ու գեղեցիկ տաղանդին կատարեալ փթիթումին մէջ յանկարծ ջլախտաւոր դարձած, գրեթէ անգամալոյժ՝ ապշեցուցիչ բան մըն է տեսնել թէ այս վարպետը կամքի ի'նչ աննկուն զօրութեամբ կը յամառի իր դողդղացող ձեռքովն այնքան հրապուրիչ գործեր ստորագրել դեռ, որոնք Ռօշէ Նիւեշ, Լը Կոմիէն Դը Լա Ֆօնթէ, Եւ ուրիշ անուններ կը կրեն: Իր կսկիծներէն հետզհետէ սրտմտած ու ինքզինք յուսահատ լքման մը տուած չէ այս վսեմ հիւանդը. արի պահակին նման, որ ինչ ալ ըլլայ, թողու չուզեր իր տեղը, հո'ն է վարպետը, ամուր, անխախտ այն փառայեղ զիրքին մէջ, զոր ամբողջ երեսուն տարի տաղանդի այնքան մեծ ու այնքան սպառիչ վատնումով մը շահած, գրաւած է:

Բայց որքան զարմանալի ալ ըլլայ մեծ վիպասանին այս անմուռնչ ու ճշմարիտ իմաստասէրի մը համակերպութիւնը, դուք անիրաւ բան մը չէք գտներ բնու-

թեան այս կոյր անօրինութեան մէջ, որ անխիղճ կոպտութեամբ մը կը փորձէ փեթտել փեթտել՝ արուեստագէտին թեւերն այն պահուն մանաւանդ ուր անոնք ամեն ժամանակէ աւելի լայն կը բացուէին բարձր պացումներու պատրաստուելով: • • • Հազիւ յիսուն տարեկան կայ հեզ մեծ արուեստագէտը, այն տարիքին մէջ որ ճշմարտագէտ կատարեալ ու տեւական գործերը կը ծնի: Վարպետը սակայն՝ հազիւ նշմարելի յոգնութիւն մը կը մատնէ միայն իր գրուածներուն մէջ, և նոյն իսկ ցաւէն ճանկատուած իր ջիւղերը, փոխանակ բզկտուելու՝ հիւանդագին և այսու իսկ անօրինակ զգայնութիւն մը ունին մերթ: • • •

Ի՞նչ ախտ՝ այդ ջլախտը, որուն առջև զինաթափ է դեռ հազիւ ծնած այն զիտութիւնը, որ բժշկութիւն կը կոչուի: Մեծ գրագէտը ի զուր իր հրաշակերտներէն մին մեր ժամանակներու ամենէն աւանաւոր ջղաբոյժին՝ Շառքոյի՝ ծոնած է. իր ախտը մագի չափ չէ բարւոքած աւտով, ինք պիտի ըսէր թէ աւելի ծանրացած է նոյն իսկ: Եթէ այսօր ուղեղին պայտազնապը՝ աչքերն են որոնք իրենց տեսողական զօրութիւնը կը կորսնցնեն. իսկ վաղը՝ եթէ ցաւը ձեռքերուն կամ ոտքերուն մէջ տեղաւորուի, ձեռքերը կամ ոտքերն են որ չը պիտի բռնեն: Վերջապէս ահաւելի ախտ մը, որ վաղուան օրուանդ ապահովութիւնը չի տար քեզի, և ոչ ալ տասնեակ տարիներ չը քաշելու խոստումը կրնայ ընել:

* * *

Բարիդ, Ռիւ ալ Պէլչատ, խաղաղիկ քաղաքի մը մէջ կ'ապրի այսօր, կամ մանաւանդ կը քաշքշէ իր կեանքը Ալֆօնս Տօտէ, առարկայ գուրդարանքին իր կնոջ որ արդէն անուն մը ունի գրականութեան մէջ, և իր զաւկին, Լէօնի քով, զոր իր «Լաւագոյն գործը» կը համարի: Գրեթէ անշարժ դամուած է խցիկի մը մէջ, ուր սակայն ժամանակակից գրականութեան վարպետի մը մտքին ամենէն դիւրաթեք ու ամենէն շնորհալի շարժումները տեղի կ'ունենան դեռ. հէզ վարպետ,

ի զուր փառքն ու հարստութիւնն իր թեւերէն են մտած՝ քայլ մը կարող չէ առնելու առանց իր ցուպին օգնութեան:

Կ'ընդունիք թէ տխուր բան է այս, թէ տխուր է այս կեանքը:

Տխուր, — է՛հ, անտանելի, ահաւելի նոյն իսկ. բայց ո՞վ չը պիտի ուղէր ապրած ըլլալ այդ կեանքը, այդ գերազանցապէս բեղուն ու փառալից կեանքը, իր բոլոր տանջանքներով ու իր բոլոր նահատակութիւններով:

ՏԻԳՐԱՆ ԿԱՄՍԱՐԱԿԱՆ

ՊԱՏՐԱՆՔ

Քանի մագիւրը ծին պատէ՝
Կը փոփոխին մարդն ու բարքեր,
Ու մռն տեսնամ հետզհետէ:
Այս վերջ դարուս կեանքին պատկեր,
Երկրպագիին ահա մատիտ՝
Ինչպէս այն ցուպն հին մագիւրուն,
ձեղրէ հարկէ լեռն ու հովիտ,
Տեղափոխէ ծովեր անհուն,
Կամ աշտարակ մը վիթխարի
Կանգնէ յանդուգն ամպերն ի վեր:

Իսկ վիպասանն հուշակաւոր
Որուն շեշտերն ազդեն սարսուռ,
Այնքան վսեմ են ու պղտոր,
Անմահներուն տաճարին դուռ:
Փառք մուրալով՝ բախէ յամառ,
Ու ետ դառնայ մըշտ ձեռք ունայն:
Հանճարն, աւագ, յաճախ բծնի
Յաջողութեան կուռքին առջև:
Հագուագիւտ է առարկին
Եւ խղճահար մարդն արդարեւ,
Հոգի տանող՝ ի և զեղուն
Խորհուրդներով, սուրբ են վսեմ
Որք բարեբար հետքեր թողուն:

Գեղեցկութիւն՝ ծպտեալ և սէզ
Ձուռի շնորհաց համեստ շղարշ:
Երկնապագիի թռիչ՝ երբեք
Սէրը չունի, այլ գիտնարարշ
Յաճի մուրը ու զգայագիրի,
Ինչպէս տխուր ծմբան առնի
Տաւրակն անբիծ, բնորշ ու զիւր
ձարի, սնունդն ազրին մէջէն:

Մ. ԱՃԷՄԵԱՆ

ԳԻՆՈՎԻՆ ՎԱՐՁՔԸ

ԺԱՂՈՎՐԳԱՅԻՆ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ

Մտղեմադիրական անխախտ քստմանելի ճշդապահութեամբ, Մեռկէլ, ամեն գիշեր, ժամը երեքին տուն կը դառնար, զլտորտըկէլէն, պատերուն տուններուն զարնուելով հազիւ հազ կարենալով տուն նետել իր յարատաւան խոշոր իրանը: Եւ անկից ետքը, հոն, ողորմելի տնակին ներսն, անկահ մերկ սենեկին մէջ, բուռն խօսքերու, լըլըլը յիշոցներու մեծաշունդ հեղել մը, որ կը յորդէ, դուրս կը պոռթկայ այդ չըջանակէն ու դրացիներուն բունը կը խռովէ: Մեռկէլ իր հօրը անվիճելի շարունակութիւնն էր, այդ կեանքին ալլանդակութիւնները ժառանգած էր իբր հաճոյալի և հեշտապնդեցիկ բան մը, որոցմէ երբեք չէր ուզեր զրկուիլ: Տորեկները, իր կարթին ծայրէն խոյս տուող ամեն մէկ ձուկի փոխարէն վրէժ լուծելու գերագոյն գաղափարով համակ, նոյնքան գաւաթ օղի աւելի կը կլնէր: Թէեւ այդ խոյս տուող ձուկերը իր աչքերուն մէջ կատաղութեան բոց մը կը փայլեցնէին ծովին վրայ, կիզիչ արեւին տակ, բայց ներքին անծանօթ գոհունակութիւն մը կը պաղկեցունէր իր սիրտը, ինչ որ տարօրինակէս երեւան կուգար իրինկուներ, երբ, գինետունը, սեղանին առջեւ, փախչող ձուկերուն վրէժը կը լուծէր, անոնց թեւին չափ օղի կուլ տալով: Իր այս ընթացքին մէջ անբացատրելի առաքինութիւն մը կը տեսնէր, անձնութիւններուն մը, անձնութեան մը մանաւանդ՝ անթօթափելի չքմեղանք մը որ օր օրի կը մեծնար, կը լայննար անոր օղիապարոյր ուղեղին մէջ, ահագին համեմատութիւններ կը ստանար, եւ այն աստիճանին հասած էր ալ որ իր միակ փիլիսոփայութիւնն էր դարձած: Երբ բոլորովին համոզուեցաւ թէ իր գինովութիւնն յանցանք մը, պակասութիւն մը ըլլալէ շատ հետի, գերագոյն զոհողութիւն մըն էր,

հողով մարմնով փարեցաւ փաթթուեցաւ այդ մոլեկան կեանքին, իր մարմնին բոլոր կորովն ու հոգին բոլոր ուժը քամելով օղիի գաւաթներուն մէջ: Օրին մէկը հրաշալի մտածում մըն ալ ունեցաւ Մեռկէլ՝ ուղեց իր նպատակն անյապաղ տեղւոյ վրայ ի գործ դնել. առտուն կանուխ գինետուն վազեց, շիշ մը օղի դրաւ գրպանն ու նետուեցաւ նաւակ՝ ա՛հ, չարածճի՛ ձուկերը, այն օրը որչափ յաճախ խոյս տուին՝ իրենց ծփծփիկ արծաթափայլ մարմինները սահեցունելով ուռկանին մահաբոյր օղակներէն դուրս, ցռուկին հազիւ դաշուներով ձկնորսի կարթին, որ, կարծես կամաւ, միշտ կ'երեւար, և ի՛նչ վրիժառու հեշտանքով Մեռկէլ կը կլնէր օղին, կը կլնէր անգուլ, անճառ հրճուանքով, այլ սիրտի անհուն անգործութեամբ: Ինքը որ այդ անակնկալ գիւտով կը կարծէր թէ մեծ բան մը ըրած է, սաստիկ հարուած մը տուաւ իր հուժկու մարմնին, որ ա՛լ կը գողգողար, կը սարսռար ծերունիի մը պէս: Այս դարմանալի փոփոխութիւն չվրիպեցաւ իր աչքէն՝ բայց բանի մը վերագրեց:

— Խայրխաւ հինցեր է, ըսաւ:

Եւ անոր տակը, վրան, ներսը քննեց ու այնպէս դտաւ: Անմիջապէս նորոգել տուաւ զայն, նորէն մէջը մտաւ իր օղիին շիշովը եւ շարունակեց նոյն առջի դրութիւնն, այս անգամ աւելի մոլեղանութեամբ, քանի մը օրուան ընդմիջումին փոխարէն: Զարմացաւ տեսնելով թէ՛ նաւակը նորոգուելէն ետքն ալ՝ իր սրբունդները ուժով չէին բռններ իր մարմինը, մատներն իր ուղած շարժման չէին հնազանդեր: Այն ատեն անձնասիրութեան զգացումը մէկէնիմէկ երեւան ելաւ անոր մէջ. ինչո՞ւ այդ տկարութիւնը իր անդամներուն վրայ: Լսած էր թէ հիւանդները բժիշկին կերթան՝ որոշեց ինքն ալ այդ միջոցին գիմել: Բայց, ուղեց քիչ մըն ալ համբերել. եւ խուլ յամառութեամբ մը չտեսնելու զարկաւ իր տկարութիւնը, որ օր օրի կը սաստկանար:

Իրիկուն մը, ծովին վրայ եւ յետոյ գինետան մէջ իր բովանդակ մոլեգնու-

թեամբը՝ խմելէն ետքը իր սիրեցեալ հեղուկը, սուռն կը գառնար, արտաճմիկ դժուարութեամբ, քարայտատակները ճանկըտելով, ցեխերը ակօսելով եւ գլուխն անդին ասդին վարնելով: Այն իրիկունը, առաջին անգամ ըլլալով, կարողութիւն չունեցաւ տուն հասնելու. ինկաւ փողոցի մը անկիւնը, խռկալով, խորթալով մահամերձի պէս, եւ հոն մնաց: Գիշերապահը տեսնելով զայն վերցուց տուն տարաւ՝ գրէթէ քաշկոտելով: Հետեւեալ առտուն, երբ, տախտակամածին վրայէն ուր պառկած էր, ելնել ուզեց Մեռիկէլ, չկրցաւ, դողդղացին սրունքները, եւ հակառակ իր սաստիկ ջանքերուն, ստիպուեցաւ նոյն օրը տունը մնալ: Ձկնորսը անակնկալ ներքնահայեցութիւն մը ունեցաւ. վիճակը քննեց, կեանքը մանրամասնեց, եւ սոսկալի համոզում մը գոյացուց: Սխալ գտաւ փրկիստփայտութիւնը զոր կաղմած կերտած էր իրեն համար. անիծեց ձուկերը որք փախած էին իր կարթին ծայրէն, անիծեց գինետունն ուր իր կեանքն սպառած էր, անիծեց իր հայրն ալ որուն սոսկալի օրինակին էր հետեւած, եւ վերջապէս գժոխքի չափ յիշոց եւ անէծք թափեց օգիին վրայ որ իր երկաթի առողջութիւնը քայքայած էր:

—Վա՛յ չունշանորդի ըռախի վա՛յ, ըսաւ ինքնիրենը, ծօ՛ւ իմ միտքէս կասնէ՞ր քի աս խալթը պիտի ուտէ. աս տէմիրի պէս պաճախներս կերերան կոր հիմակ, նեֆէս աղէկ չեմ առներ կոր. ալ վճճիկը խմէ քեզի. թէօպէ՛. . .

Եւ շարունակեց իր մտածումները, որոց մէջ կարծես պիտիանք մը գտաւ, զօրութիւն մը, անսովոր ուժ մը, որ հետզհետէ կը մոզներ իր տկար մարմնին մէջ եւ կ'ողեւորէր իր թոյլ ախտաւոր մարմինը:

Մեռիկէլ չորս օր տունը մնաց իր ուժերը վերստանալու համար, եւ այն օրն երբ առաջին անգամ դուրս ելաւ իր տունէն, անհուն երանութիւն մը դգաց իր ներսիդին: Գնաց պարտեցաւ ծովեզրը, դիտեց ծովն ու երկինքը, որոց միջեւ անցուցած էր իր տաժանակիր կեանքը:

տեսակ մը պժգանքով նայեցաւ ձուկերուն որք պայծառ ջուրերուն մէջ կը լողային՝ իրենց պճլտացող աչուքներով կարծես հեգնելով վրէժխնդիր այն ձկնորսը որ այդպէս իրենց կը նայէր խեռ ու խռժռ, առանց կարենալու իրենց դպչիլ:

Մեռիկէլ հեռացաւ ծովեզրէն՝ քիչ մը տիւր. անցաւ իր սովորական փողոցներէն. մռլթը կը տիրէր, մռայլ մթնութիւն մը որ թերեւս առաջին անգամ ըլլալով ձկնորսին աչքին կը զարնէր. ճամբան կը մոռնէր, իր անցեալ անտանելի կեանքն աչքին առջեւ կը բերէր: Յանկարծ կեցաւ. այն գինետունին առջեւն էր հասած, ուր սովորաբար կը խմէր. ամպ մը անցաւ իր այրած ճակտին վրայէն, գլխի պտոյտ մը ունեցաւ կարծես. քայլը խոտորեցաւ, հառաչ մը արձակեց եւ ներս մտնելով գինետունէն, խենդի պէս գնաց նստեցաւ սեղանի մը առջեւ. եւ ըսաւ ինքնիրենը.

—Է՛յ Մեռիկէլ, չո՛րս օր՝ հէ՞. վճճիկընէ ծօ՛ւ աս քու ըրած ֆէտաքեարութիւնդ, որբո՞ն ծառքէն կուգար, իշտէ էս ըրի. չորս օր ըռախի չը խմէ՛, ծօ՛ւ աս խելքէ միտքէ շաննելիք պան է: Է՛յ աս ըրած ֆէտաքեարութան հախը ի՞նչ սխալի ըլլայ, վճճիկ պիտի տայ ինծի: Է՛ս կուտամ կըլլայ կ'երթայ. Հէ՛օյ, ուստա՛ Միրիկ, չի՛ն մը ըռախի պէր սըտեղ. . .

ԵՐՈՒԱՆԻ

ՄԵՐ ՀԱՒԱՏՔԸ

ՄԱՆԿԱՌԹՅԱՆ ՈՒՇԱՏԱՆՆԵՐ

Տէրսիմի ազքաա լեռնականը, որու հաց տուած էին մեր տունները, մեր քաղաքին բնակիչները, մեր գիւղին ու չըջակայ հայ գիւղերուն հայերը, — ահա մեզ ծանօթ ամբողջ մարդկութիւնը: Ատոնցմէ դուրս քանի մը հեռաբնակ ազգերու անուններ, մուրթին մէջ երեւակայութեամբ տեսիլքներու պէս, եւ եբրայեցի մը՝ մեր Զեֆօրը, զոր ձմեռները միայն կը տեսնէինք քանի

մը օր, իր բերեղակի ծրարը չարկած, — ահա մեր ազգագրիտութիւնը: Իսկ մեր հոգեկան աշխարհը կը շինուէր մեր դարաւոր տաճարներովը, խաչքարերովը, սրբարաններովը. դմբէթը երկինքն էր իր շողուն ցոլքերովը, և մեր հաւատքը Յակոբի լուսեղէն սանդուղին պէս, երկնքի ու երկրի մէջ տեղը, վերէն վար կախուած կը փոփոխէր ծիածանի թռուցիկ երանգներով: Աս հաւատքով օր մը պիտի գտնէինք մեր ամբողջ հին սերունդը, — մանկիկները խնկեհի ծառին ճիւղերուն վրայ շարուած թռչնոյ ձագերու պէս, և ծերերն ալ՝ անոր շուքին տակ կարգ կարգ նստած:

Մեր դիտութեան ու հաւատքի անթուականին մէջ՝ աշնանի օր մը գիւղին մէկ ծայրէն միւսը հնչած էր՝ «Բըր մը եկեր է»: Ի՞նչ բան էր արդեօք. երկնքէն թէ դժոխքէն: Քանի մը օր ետքը տեսանք. քիթը՝ մերինն պէս, բերանը՝ նոյնպէս. աչք, ոտք, զլուխ՝ մերիններու կարգէն: Ուրեմն, եթէ մարդ չէ, մարդու մօտ բան մըն է:

Բայց ի՞նչ ըսել է բոտո: Այսօր կ'անցնի, վաղը կ'անցնի, կ'անցնին ու կ'անցնին, ու մեք տակաւին չենք կրնար յագեցնել մանկական հետաքրքրութիւն մը: Վերջապէ՞ս. կը փնտռենք մեր եկեղեցիին մէջ. եթէ հոն է, մոմ կը վառէ, խաչ կը հանէ ու կ'աղօթէ մեզի պէս մեր պատկերներուն առջեւ, ա'լ ամէն հաւատարմութիւն թէ մարդ է նա: Եւ սակայն չկայ հոն: Եկեղեցիէն դուրս ամէն տեղ: Հոս մանկական բուռն վիճաբանութիւն մը.

— Ձէ՛, անիկա մարդ չէ՛:

— Թէ որ մարդ ըլլար, եկեղեցի կուգար:

— Մարդ չէ՛, հապա ի՞նչ է:

— Սատանայ:

— Ի՞նչպէս սատանայ, հայենակ կը խօսի, անունն ալ էվանէս է:

— Սատանան ամէն դէմք ու ամէն անուն կ'առնէ, — ա'տ ալ չգիտնալու բան մը ըլլա՛ր...: Այսու ամենայնիւ, հանելուկը մնաց անլուծանելի, և մեր հետաքրքրութիւնն ալ՝ տալիս եւս զրգուռած:

Վերջապէ՞ս: Չարաճճիկ մը, որ կրնար մեր պետը համարուիլ, գործնական փոր-

ծի մը յորդորեց զմեզ: Իր կարծիքն էր որ եթէ բոտո սատանայ էր, կրնար մեր փորձանքէն ազատիլ: Զիւնեղէն գնդակի պիտի բռնէինք. օր ու ժամ որոշուած էր: Իրաւ ալ բռնեցինք օր մը խեղճը: Նշան տրուածին պէս՝ չորս կողմէն ձիւնէ գնդակներն երեւցան օդին մէջ. վերջ չկայ. կը թափին կարկառի տարափի պէս: Աստիւն կը ծռի հեզը, անգին կը ճկի, մէկէն ազատելով՝ միւսէն կը զարնուի: Վերջին փորձ մը, և ահա անձրկած կեցած է էվանէսը: Հասկցանք որ Բըր սատանայ չէր. վասն զի սատանան կրնար աներեւոյթ ըլլալ մեր զօրութեան առջեւ, և մեր գնդակներն ալ կրնային միայն օդային խաղ մը ըլլալ: Հետեւութիւնն առ եղաւ:

Բոտը մարդ է...:

«Մարդ է» դադափարը քիչ մը մարդասէր կ'ընէր զմեզ. և իրաւ ալ մեզմայցանք այնուհետեւ մեր ապագայ փորձերուն մէջ: Միայն թէ ժամ չերթալը, մեր սուրբերուն ու տէրտէրին չհաւնիլը, դիւր չէր գար մեզի: Եւ սակայն Բըր էր, և կարեկցութեամբ կը փնտռէինք թէ արդեօք դժոխքին ո՞ր մութ անկիւնը պիտի նետուէր՝ յաւիտեան շարժարուելու:

Հիմա կ'ուզէինք տեսնել բոտը իր տանը մէջ: Հայր ու սուրբ կը նստէին ժամերով անսպառ համբերութեամբ, իրենց զբաղումն էր Ս. Գիրք կարդալ ու առտու իրիկուն ալ երգերով աղօթել: Գիւղին մէջ՝ ոչ ոք անոնց հետ կցորդութիւն ունէր. հասարակային կարծիքը կը դատապարտէր զայն ու անոր կռնակին կը փակցընէր Բըր յայտարարութիւնը: Եւ այնուհետեւ վա՛յ ան մարդուն: Այսպէս հայր ու որդի, իրարու մէջ ամփոփուած, իրենց աղօթքովն ու միակերպ երգերովը, որ ձանձրոյթը կ'ստեղծէն, պիտի սփոփէին ձանձրութիւն երկար ժամերը և ճգնաւորական կեանքի մենութիւնը պիտի շնջընէին յօրանջելով: Մեք տօներ ունէինք, եկեղեցւոյ հանգիստաւոր տօներ, նշանաւոր, հարսնիք ու բարեկենդան ունէինք. իսկ անոնք՝ ոչինչ, ոչինչ մեր գիւղին մէջ: Մեր կարեկցութիւնը տակաւ աւելցած էր մինչեւ Մեծ Պահոց առաջին եօթնեակը,

երբ գիւղին մէջ տարածուեցաւ թէ անոնք
... կ'որոշէին : Ինչ կը նշանակէր ատ .
Յիսուսի չարչարանքի օրեր , մեր եկեղե-
ցիներուն վարագոյրները ձգուած , խաչե-
լուծեան պատկերը ի տես կը դնէ ծակ
ծակ ոտքեր , ծակ ծակ ձեռքեր , Աստուա-
ծածինն անոր ոտքերուն տակ նստած
ցաւազին ու նուաղկոտ , և մեր գիւղին
մէջ բոլոր պահքը կը լուծէ : Մեր հի-
ւանդները , մեր մանկիկները պահք պա-
հեն , օրհասականին անգամ ղլացուի կը-
տոր մը միս , բաժակ մը կաթ , քիչ մը
մածուն , ու . . . ատ մարդերը մսին ճեն-
ճերը տարածեն գիւղին մէջ և մեր սուրբ
օդն աղտեղէն : Ըլլալիք բան է աս : Այս
յանցանքին պատիժը մենե վեր էր :

Առաջին ձմեռն այսպէս անցաւ : Գար-
նան մեկնած էր . և երբ աշունը նորէն
դարձաւ , ատ մարդը Բէ բոլորն եղած էր :
Իր գործը քիչ մը յաջող գնաց ատ ձը-
մեռը , հեռուէն ու մօտէն , ծակէն ծու-
կէն քանի մը հոգի ընտանեցած էին ա-
նոր : Հայրս սեւ կողքով Աստուածաշունչ
մը առած՝ տուն մտաւ իրիկուն մը , բայց
մեր պառաւ մամը սպառնաց դուրս ընել
զինքը , եթէ վաղն առաւօտ իր տեղը չե-
թար ատ գիրքը : Նոյն գէպքը պատահած
էր քանի մը տեղ , և ամէն կողմէ ալ՝ նոյն
սպառնալիքը : Այսպէս թէ այնպէս , մեր
բոլորն ունեցաւ մէկ հաւատացող : Մկըր-
տիչ Տէր-Միսոնց , զոր հայրը դուրս ըրած
էր , և մեք կը տեսնէինք ատ վտարուա-
ծը , ինկած հոգով ու մարմնով , թափա-
ռական : Կինն ալ , սիրուն , մանկամարդ
կին , իր ամուսնոյն ողջութեանը՝ այրու-
թեան լաթեր հագաւ . . . երկու տարիէն
ետքը երբ մեռաւ , իր վրայ կսկծացողնե-
րուն սփոփանքն աս էր թէ « խեղճ Ան-
նա , աղատեցար » :

Էվանէս եղբայր իր քարոզին սրբարան
ընտրած էր գիւղին ձիթահանները : Գի-
շերուայ նախընթաց ժամերուն կ'երթար
կը նստէր մեր ձիթպաններու մէջ , և , ա-
ռանց գարշելու անոնց աղտեղութենէն ,
ձէթի զգուելի բուրու մէն , իր հաւատքը
կը քարոզէր ատ մթին խորշերու մէջ : Իր
ունկնդիրները , իբրեւ վարձատրութիւն

իրենց ինքնակոչ վարդապետին , օր մը ձը-
րագները կը մարեն , և ձիթահանին մէջ
ընդհանուր շփոթութիւն հանելով ձէթով
կը թաթխեն խեղճ մարդը ոտքէն մինչեւ
գլուխը և « Որպէս իւղ զի իջանէ ի դուխ
և ի մօրուսն Ահարոնի , ի մօրուացն իջա-
նէ ի գրպանս զգեստուս նորա » : Եւ Էվա-
նէս եղբայր , Եսայիի որովի պէս իր կը-
տըրչին առջեւ անմուռնչ , բերան չբանար
և գիշերով տուն կը դառնայ ձեռք մը
լաթ վրայ տուած՝ կորուսեալ ոչխարները
գտնելու յուսով : Եւ գուցէ վերջին ան-
գամ ըսած ըլլար . — Հայր , ներէ՛ անոնց ,
զի չեն գիտեր թէ ի՛նչ կ'ընեն :

Մեր բոլոր չյաջողեցաւ . և միայն
հետքեր թողուց մեր գիւղի կոյս ճամբա-
ներուն վրայ : Անկէ ետքը քաղաքէն և-
կան ու գացին ուրիշներ . իրենց կտա-
կարանը սպառնաց մեր գիւղին . և տեղա-
կան բողոքականութիւնը իր բոլոր ուժերը
լարեց անոր դէմ : Կիրակի մը , ժամադրու-
թեան մը համեմատ , քաղաքին բողոքական-
ները թափեցան մեր գիւղին վարժատունը :
Մեր ախոյեանն էր Անդրէաս վարժապետ .
զինանոցն ալ՝ զրաբար Աստուածաշունչը .
խակ անոնցը՝ Աշխարհաբարը , և մարտիկ-
ները՝ ամենքն ալ : Ը՛հ , մերը , ոսկեզօծ ,
գեղեցիկ , պատկառելի . իր տեսքին
մատաղ . ո՞վ կը զատուի անկէ : Ժամերով
վէճը շարունակուեցաւ . մեք բան մը չհաս-
կեցանք . միայն թէ երբ իրիկուան ժամե-
րուն՝ ձիով մեկնեցան բողոքականները ,
դափնին մեր վարժապետին տուած էինք
մեք :

Այնուհետեւ առածի կարգն անցաւ ,
թէ ան գիւղին հետ վիճիլ կարելի չէ ,
ու մեք և մեզմով դաւառը մնաց այնպէս
ինչպէս էինք թաղէսի օրէն : Փորձերը
կրկնուեցան պարբերաբար , մէկ երկուք
գացին , ու նորէն դարձան իրենց նախա-
հարց տունն ու հաւատքին : Եւ մեր հա-
ւատքը մնաց հոն անխախտ . նոյն ցոյ-
քերը կը շինեն դարձեալ Յակոբի լուսեղէն
սանդուղը , նոյն Աստուածն է որ , անփո-
փոխ , իր ցօղովն ու անձրեւովը կը թրջէ
մեր ծառաւ արտերը : Մեր եկեղեցիները
մնացին չէն ու կանգուն . մեր գիրքը այսօր
ալ կը պատուիրէ իր հաւատացողներուն .

«Աղօթեցէք ամենուն համար. հաց տուէք մուրացիկին. ճամբորդն ընդունեցէք ձեր տանը մէջ, ու չարէն խորշեցէք...»

Կա՞յ Աստուածութիւն մը, որ ասանք դատաւարուէ:

Իսկ մեր բրտաը, ինչպէս լսեցի տարիներ առաջ, ի Բարբերդ գարձին, գայլերու կեր եղած էր, ու ցաւեցայ: Հիմա կը ներէ անշուշտ մեղի՝ մեր ձխնեղէն գընդակներու համար, որոնցմով նեղացուցինք զինքը: Եւ մեր ալ կը ներենք իրեն՝ մեր բոլոր սրտադողերուն համար, զոր կըրեցինք իրմով՝ մեր ջինջ, աննիւթ հաւառքին մէջ: Մեր հաւառքը իրն ալ եղած էր երբեմնեւերկուստեք միեւնոյն յանցանքն ունեցանք. մեք՝ մանկութեան յանցանքը. իսկ նա՝ տգիտութեան յանցանքը:

ՀՐԱՆԴ

ՄԱՆՐԻԿ ՈՏՆԵՐԸ

Շուշան ծիւնին կոյտին վըրայ՝
Ոյր հատիկները կը փայլին
Յուրի մը տակ որ կ'երերայ՝
Կը դանդաշեն կանանց հոյլին
Մանրիկ ոտները:

Կանաչը դաշտն է պտերն արդ.
Այդ սաւանին վըրայ զըմբուխտ՝
Ուր կը շողան յակինթն ու վարդ՝
Կը ցատկըռտեն անոնց ջուխտ ջուխտ
Մանրիկ ոտները:

Խոտն ու տերեւ ա՛լ թօշնո՞ւմ է.
Եւ հովտին մէջ, զորդ մը դեղին,
Յուրտ վարանքով որ կը հիւծէ՝
Յամբ ու թեթեւ դեռ կը սահին
Մանրիկ ոտները:

* * *

Անրժուծեան, տենդոտ յոյսին
Կը յաջորդէ տերեւն աշնան,
Որ նախանձն է՝ անոնց մասին
Որք տակաւին յուսով կըրնան:

Անկէ վերջը կուգայ լուպէն
Սարսուռներուն այն ոգեվար,
Որք աշխարհի երազներէն
Փոսի մը մէջ կը մըղին յար
Մանրիկ ոտները:

ՎԱՀԱՆ ՄԱԼԷՋԵԱՆ

ՃԱԲԹՈՒԱՆ ԼՈՒՐԵՐ

Ա. Զ. Գ. Ա. Յ. Ի. Ն.

Բերայի թաղական խորհուրդը վերջնապէս համաձայնութիւն գոյացուցեր է, կ'ըսուի, ճաշտարանապետ Թոքաթիւն Մկրտիչ Էֆէնտիի հետ՝ Նոր Թատրոնին տեղ կառուցուելիք շէնքին ու վարձ կալութեանը մասին, և պայմանագիրը պիտի կնքուի ի մօտայ պայմանով սակայն որ ինչ ինչ կէտերը կարգադրուին որոշ կերպով:

—Ս. Էջմիածնայ ճեմարանին ուսուցիչներէն Պ. Պ. Արշակ Տ. Միքայէլեանն ու Բարսաղան Տ. Մովսէսեանը փափագ յայտներ են Մրբազան տեղակալին՝ վարդապետ ձեռնադրուելու:

—Կտակաց հոգաբարձութեան կողմէ պատրաստուա՝ հրահանգն, որ ցոյց կուտայ Վագֆի դուռնութեամբ կտակ ընելու մասին եղած տրամադրութիւնները ըսուըն ժողովին կողմէ վաւերացած ըլլալով՝ ապագութեան պիտի յանձնուի եւ շրջաբերականով մը ամեն կողմ պիտի դրկուի:

—Փարիզի թերթերը կը հաղորդեն թէ՝ ֆրանսական Ակադեմիայի վերջին նիստին մէջ որուն կը նախագահէր ֆրանսուա Գորէ կարգացուեր է Պետրոս Աճեմօզլուի մէկ կտակն որով հանգուեցաւ հայագգին որ, ինչպէս կը յիշուի, երեք միլիոն ֆրանք կտակած էր արդէն Փարիզի մարգարայական ու բարեգործական հաստատութիւններու, 100,000 ֆրանք ալ կտակեր է Ակադեմիային: Այս գումարն տոկոսը պիտի յատկացուի բարի գործեր ընող անձերը վարձատրելու:

—Հանգուցեալ Մակար Կաթողիկոսի գոյքերուն գնդութեամբը ամբաստանեալ Բերք Տէր-Պետրոսեան և Հաճի Յակոբի դատատանը ապրիլ 13ին տեղի ունեցեր է Երեւանի դատարանին առջեւ. Խօսեր են՝ Ս. Էջմիածնի փաստաբան Պ. Ռուբէն Զալալեանց, ապա Բերք Տէր-Պետրոսեանի փաստաբան Պ. Ալամալեանը: Ընդհ.

դատախազը միայն Հ. ճի Յակոբին պատ-
ժուելը պահանջներ է : Յետոյ խօսեր է
Հաճի Յակոբին փաստարան Պ. Շըվալիէն :
Ի վերջ չորս ու կէս ժամու խորհրդակ-
ցութեան , դատարանն հետեւեալ վճիռն
արձակելու է . Հաճի Յակոբը դատապար-
տուելու է 3 տարի ծառայելու կալանա-
ւորեալներու խումբին մէջ , իսկ Բերգ
Տէր-Պետրոսեանը անպարտ է արձակ-
ուելու :

— Դատական նախարարութիւնը պաշ-
տօնագրով մը հաղորդած է Ս. Պատրի-
արքին՝ Պետական խորհուրդի մէկ որո-
շումն , որով մայրաքաղաքիս Թաղերուն
մէջ գտնուած աղքատախնամ ընկերու-
թիւնք կ'արտօնուին տոմսակներու միջո-
ցով հանգանակութիւն կատարել՝ կարօտ-
եալներու ամեն կերպով օգնելու համար :
Ս. Պատրիարքը յանձնարարեց Ելեւմտից
Տեսչութեան որ այդ ընկերութիւններու
նպաստի տոմսակները կ'ընելով յանձնէ ի-
րենց :

— Պատրիարքարանի շինութեան յանձ-
նաժողովն ի նիստ հրաւիրուած էր չո-
րեքշաբթի օրը Ղալաթիոյ Խորհրդարա-
նին մէջ . ներկայ էին Աբիկ էֆէնտի Ուն-
ճեան , Յովհաննէս էֆէնտի Էսաեան եւ
Յարութիւն էֆէնտի Նորատունկեան :
Յանձնաժողովն ընդ նախագահութեամբ
Ս. Պատրիարքին , խորհրդակցութիւն-
ներ կատարեց և նկատողութեան առաւ
ճարտարապետական տեղեկագիրն Յանձ-
նաժողովն , յետ խորհրդակցութեան ,
որոնց որ Պատրիարքարանի ար. Է. շէնքը
, ակուրի և ի նորոյ շէնք մը կառուցուի :

Ն Ե Ր Ք Ի Ն

Ներքին գործոց նախարարութիւնը ,
տեղեկանալով որ Տիվրիկի գաւառա-
կին մէջ չահամու անձինք ոմանք ծանր
տոկոսներով ժողովրդեան մըսս կը հաս-
ցնեն , որոշած է նոյն նախարարու-
թեան պաշտօնեայնէրէն Խալիլ Շիւքրի
էֆէնտին զրկել անդ , հարկ եղած քըն-
նութիւնները կատարելու համար :

— Հանրօգուտ շինութեանց նախարա-

րութիւնը՝ նահանգաց երկրագործական
վիճակին վրայ վիճ . կազմութիւն մը պատ-
րաստելով մատուցած է Բարձր . Մեծ-
նպարքոսին :

Պետական Խորհուրդն օգտակար գըտ-
նելով այդ վիճակագրին պարունակու-
թիւնն , անոր պատրաստութիւնը գո-
հունակութեան արժանի դատած և որո-
շած է տպագրել տալ զայն :

— Անգլի . կան ապահովագրական ըն-
կերութիւնք , ինչպէս արդէն ծանուցինք ,
իջեցուցած են իրենց սակագիրները շէն-
քերու վրայ : Այս որոշում պիտի գոր-
ծադրուի մայիսի սկիզբէն : Քարուկիր
շէնքերու սակագիրը կէս առ կէս զեղ-
ջուած է եւ փայտաշէններու համար ալ
երկու երրորդ համեմատութեամբ զեղջ
մը եղած է , այսինքն , օրինակի համար ,
փայտաշէն տան մը համար եթէ տարե-
կան հարկը երեք զրուշ կը տրուէր՝ յետ
այսորիկ երկու զրուշ պիտի տրուէր . նոյն-
պէս քարուկիրներու համար ալ եթէ
հարկը քառասուն փարա կը տրուէր ,
քսան փարա պիտի տրուէր :

— Ադրիանուպոլսոյ նահանգին կուսա-
կալ անուանեցաւ Ապտիւրրահման փաշա ,
նախորդ կուսակալ Այսընի նահանգին :

— Նիւ . Նօքթի առեւտրական սենեակը
փափագ յայտնած ըլլալով որ Շիքակոյի
արուեստական զէսին բացման առթիւ
առեւտրական ներկայացուցիչ մը կարգուի
ի Միացեալ-Նահանգս . կ . Պոլսոյ Առեւտր .
Սենեակն իր անդամներէն Պ. Տէլէմաք
Թէօլօղօն նշանակել է , որ ի մօտոյ պիտի
մեկնի յԱմերիկա :

— Հռոմ ուղեւորող օսմանեան պատ-
ուիրակութիւնը Պրինտիվիէ շոգենաւ նըս-
տելու պահուն՝ կառավարական պաշտօն-
եայք ու երեւելիք խնդրեր են պահ մը
յետ . ձգել իրենց ուղեւորութիւնը՝ տըր
ուելիք հացկերոյթի մը ներկայ գըտ-
նուելու համար : Հասան Ֆէհմի փաշա ,
Նուրի պէյ ու Թէվֆիդ պէյ այդ հացկե-
րոյթին ներկայ գտնուելու եւ արժանա-
վայել պատիւներ եղեր են իրենց : Պատ-
ուիրակները մայրաքաղաքս դարձան ե-
րեքշաբթի օրը :

Ա Ր Տ Ա Ք Ի Ն

Նախընթաց երկու շաբաթի օրը, Շիրակայի մէջ տեղի ունեցաւ Տիեզերական Գործողական արուեստաշահութեան բացումը, ի ներկայութեան Քլիվլենտ նախագահին, որ բարի գալուստ մաղթեց օտարազգիներուն. Հին աշխարհի ներկայացուցիչներուն առջեւ թուեց ամերիկեան, եւսափաղբին կատարած մեծագործութիւնը: Ժիլդ միջօրէին, ելեկարական կոճակին վրայ կոխեց, որով միաշաղոյն սկսան բանի, ամեն մեքենայները, ալլալները, չրվիմները, եւայլն:

Բացման օրը 500,000 հոգի մտեր են ցուցահանդէսը: Իրիկունը, հրաշալի լուսավառութիւններ տեղի ունեցեր են:

— Չարը հրամանագիր մը հաներ է որով Ռուսիայ մէջ գտնուած կաթողիկ վարժարանները հալածանքի են կրթութեան նախարարութեան ուղղակի հսկողութեան ներքեւ պիտի մտնեն այսուհետեւ:

— Ռայխտակին լուծուելուն օրը, երբ Ալվարդ վարժապետը դուրս կ'ելնէր, ձերբակալուեցաւ:

— Ռայխտակը, ապիլ վեցի նիստին մէջ մերժեց զինուորական օրինագիծին առաջին յօդուածը որ կը վերաբերէր գործոն բանակին թիւն աւելցունելուն: Երբ նախագահը ծանուց քուլարկութեան արդիւնքը, նախարարաւեա կուս Բաիրիլի կարգաց կայս, հրամանագիրն որ կը լուծէ խորհրդարանը: Նոր ընտրութիւնները որոշուած են յունիս 15ին:

— Վոլչա գետին մայր, Նիմնի Նովկորոտի մայր օտարացի աշտպին կոոր մը երկուքի բաժնեկ երկու չողենաւ:

— Էնրիկ երկրաշարժներէն վնասուած անձերուն համար Ամէսքը մէջ կազմուած նպաստամատոյ լուծուածովը մէկ ու կէս միլիոն ֆրանք ստացեր է՝ ոչ եւս ու պակաս զանազան քաղաքներու մէջ կատարուած հանգանակութիւններէն:

— Յունաստանի նոր փոխարութիւնն ընդները ընդունած չրլալով այն պայմանը թէ փոխարութիւնը վաւերացուելու է երեսփ. ժողովէն, նախարարապետ Պ. Թրիքուրիս երեքշաբթի օրն հրաժարականը մատուցեր է թագաւորին:

ՄԵՐ ԴՈՐԾԱԿԱՆՆԵՐԸ

Արիւնտուպոլիս	ՄԱՅՍՈՒՏ	ԷՖ. ՍԱՆՏԱՆՆԱՆ
Չմիւռնիս	ԿԱՐԱՊԵՏ	ՄԱՅՏԱՆՆԱՆ
Խաբըրդ	ՌՈՒՐԷՆ	ՉԱՐԱՐԵՆ
Կիրասոն	ՅԱՐՈՒԹԻՆ	ՄՈՒԹԱՆՆԱՆ
Մալկարա	ԱՐՏԱՆԷՍ	ՅԱՐՈՒԹԻՆՆԱՆ
Նիկոմիդիա	ՄԻՆԷՆ	ԱՐԱՆՆԱՆ
Ռօտոսթօ	ՏՕՐԹՕՐ	ՆԷՎՐՈՒՋՆԱՆ
Տրապիզոն	ՅԱԿՈՐ	ՇԱՄԱՐՇ



Ամեն անոնք, որք կ'ուզեն ճաշայի եւ Չինու ճամարիտ թէյ խմել, պէտք է դիմեն Կ. Պոլիս, Պահչէ-Գաբու, Ճէլալ Պէյ խանի կից թիւ 10, ԵԱՎՐՈՒԵԱՆ Է ԻՍՍ-ԳՈՒՎԵԱՆ վաճառատունը, որու զանազան տեսակ թէյեր՝ թէ՛ տեսակի ալիւրոթեան, թէ՛ ճաշակի եւ հոտի պնուշութեան եւ թէ՛ գինեքու աժանութեան կտրմանէ անհամեմատելի են:

Յիշեալ վաճառատան թէյերը Թուրքիոյ բոլոր թէյաւաճառաց քով կը գտնուին ի վերեւ զրուած մարքայով, որու կեղծերը ելած ըլլալով պէտք է զգուշանալ:

ԱՐՏՈՆԱՏԷՐ

Կ. Ս. ԻՆԹԵՐՆԱՆ

Ի Տպարանի ԱՐԵՒԵԼԻ Է. ՄԱՍԻՍ լրագրաց